ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՆԷՔՍՊՐՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ,ԼՈՌՈՒ ՄԱՐԶ,ք.ՎԱՆԱՁՈՐ
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂ. 8/49-1

ՀԵՌ. 094 14 84 10
ԷԼ.ՓՈՍՏ shinexprtllc@gmail.com

ООО "ШИНЭКСПРТ"
РА, ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ,
г.ВАНАДЗОР,УЛ.ТАТЕРАКАН 8/49-1

"SHINEXPRT" LLC
8/49-1 TATERAKAN ST., VANADZOR,
LORI REGION, RA

« 22 » հոկտեմբերի 2025թ. No ՅՅՏՄ-ՄԱԾՁԲ-25/15

Պետ. լիցենզիա No 17157

Նախագծող՝ «ՀԱԼԳԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

Տնօրեն՝ Դ. Հովսեփյանին

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

## ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Աճարկուտ բնակավայրի հենապատի ուժեղացման և բացօթյա լողավազանի կառուցման աշխատանքային նախագիծ

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Աճարկուտ բնակավայրի հենապատի ուժեղացման և բացօթյա լողավազանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախագծերի նախահաշվային արժեքը կազմում է 36877.7 հազ. Դրամ ներառյալ Ա.Ա.Հ-ն:

( փորձաքննության եզրակացություն առդիր 2 էջ):

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ե. Ասատրյան

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

**Ճարտարապետաշինարարական մաս**

Համաձայն առաջադրանքի, տեղում կատարվել է ՀՀ Տավուշի մարզի, Աճարկուտ բնակավայրի հենապատի ուժեղացման և բացօթյա լողավազանի կառուցման ուսումնասիրում և չափագրում:
Հենապատը գտնվում է անբավարար վիճակում (կիսաքանդված): Անհրաժեշտություն է առաջացել քանդել գոյություն ունեցող հենապատը (քարային շարվածք), տեղում կուտակելով: Հետագայում օգտագործելով խողովակի ելքում հունի սալարկման համար: Միաժամանակ նորոգել խողովակի ելքի գլխամասի իրանը, կառուցել բացօթյա լողավազան:
• Հենապատը իրականացնել միաձույլ բետոնից, անվտանգությունից ելնելով հենապատի և նորոգվող գլխամասի վերին հատվածում տեղադրելով մետաղյա բազրիքներ:
• Բացօթյա լողավազանը կառուցել միաձույլ ե/բ B-25 W 6 տարբեր բարձրության, տեղադրել աստիճաններ, լողավազանի հատակի և պատերի ներկում «Гидростоун» ներկով:
• Հանդերձարանի և ցնցուղարանների կառուցում:
• Ջրամատակարարումը իրականացնել լողավազանի կից տարածքից մոտ 60 մ հեռավորության վրա հոսող ջրից: Մետաղական d=159մմ խողովակների մուտքում ջրհորի և պարզապանի կառուցում:
• Ջրահեռացումը իրականացնել լողավազանի ցածր նիշում տեղադրվող ø150 մմ հոսակի և մետաղական խողովակների միջոցով:
Անհրաժեշտ ծավալները բերված են գծագրերում և ամփոփագրերում:

**Նախահաշիվ**

*Նախահաշվային փաստաթղթերը կազմվել են ՀՀ կառավարության*
2024թ. հոկտեմբերի 17-ի N1656-Ն որոշման պահանջներին համապատասխան
Համաձայն վերը նշված նախահաշվային արժեքների հաշվարկման համար հաշվի են առնված հետևյալ գործակիցները՝ ընդհանուր նախահաշվային արժեքի հիմնական բաղկացուցիչների
--- նյութերի արժեքներին

| | |
|---|---|
| -1.132 | -տրանսպորտային ծախսեր (ըստ մարզերի) |
| -1.05 | -այլ նյութեր |
| -1.02 | -պահեստավորման ծախսեր |

Նախահաշվային արժեքը = աշխատավարձ + մեքենաների շահագործման արժեքը +
+ նյութերի արժեքը x 1.02 x 1.05 x 1,132
Աշխատավարձի հաշվարկման համար օգտագործվում է K=2437,49
Մեքենաների շահագործման համար K=3048,57 միջին ամսական աշխատավարձը 263858 դրամ
Նյութերի արժեքների հաշվարկման համար օգտագործվում է 2025 N8 ինֆորմացիոն տեղեկատուն

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինէքսպերտ» ՍՊԸ-ն նշում է, որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:

3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Շինէքսպրտ» ՍՊԸ**-ի փորձաքննությունը **ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է**, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և

**ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ**

Գլխավոր ինժեներ՝ Ա. Զալյան

Փորձագետ՝ Գ. Գուլանյան